

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1946—1948 թթ.)**

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Տաշխտական Գերմանիայի շախչախման լուրը սովետական ժողովրդի հետ ցնծությամբ ընդունեցին նաև սփյուռքահայերը, որոնք իրենց ներդրումն ունեին այդ գործում:

Պատերազմից հետո վերականգնվեցին Հայրենիք-Սփյուռք կապերը: Սփյուռքահայերը ծանոթանալով սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումներին ու սովետական իրավակարգին՝ անձկությամբ փափագում էին զալ Հայրենիք՝ Սովետական Հայաստան:

1945 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը ամեն ինչ անում էին, որպեսզի ավելի շատ սփյուռքահայեր այցելեն Սովետական Հայաստան, տեսնեն հայ ժողովրդի նվաճումները, ավելի ունալ ու հստակ պատկերացում կազմեն Հայաստանի մասին: Միաժամանակ լայն աշխատանք ծավալվեց՝ ծանոթանալու հայ գաղթախնների կյանքին: «Առաջ ոչինչ չգիտեինք նրանց մասին,— ասում է ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կարապետյանը,— մենք նույնիսկ չգիտեինք նրանց թիվը... ճշտեցինք նրանց իրավական վիճակը, պարզվեց, որ հայերը տարբեր երկրներում տարբեր իրավական վիճակի մեջ են, մի մասը շունեն քաղաքացիություն»¹: Ահա ինչ է դրում Սովետական Հայաստան այցելած իրանահայ պատվիրակ Բարկին Ղուրուղչյանը. «Մի՞թե այսպիսի հայրենիք ունենալուց հետո կարելի է ապրել օտարություն մեջ, ուր ոտնահարվում են մարդու տարրական իրավունքները: Վերադառնալով Իրան՝ նա հաստատվե՞նք հայրենադարձվելի?»:

Հայրենադարձ սփյուռքահայերը գիտեին նաև, որ ՍՍՀՄ-ը պատերազմից դուրս էր եկել թեև հաղթանակով, բայց ծանր կորուստներ էր ունեցել. թշնամիներն ավերել էին 1710 քաղաք, 70 հազար գյուղ, 31850 գործարան և այլ ձեռնարկություններ²: Քանզված քաղաքների ու գյուղերի վերականգնման աշխատանքներին պետք է մասնակցեի նաև Սովետական Հայաստանը, որի տնտեսությունը նույնպես բարվոք վիճակում չէր:

Հայաստանում կրճատվել էին ժողտնտեսության մեջ կապիտալ ներդրումները, մի շարք խոշոր շինարարական աշխատանքներ կանգ էին առել, խիստ սահմանափակվել էր մյուս տնտեսական շրջաններից մեքենաների, սարքավորումների և սպառման առարկաների ներմուծումը, զգացվում էր աշխատուժի պակաս³: Այդ ամենին 1946 թ. ավելացավ անբերրիությունը⁴:

Գաղթաշարժի հայերը, զգալով Սովետական Հայաստանի տնտեսական ծանր պայմանները և նյութական սուղ միջոցները, պատրաստ էին կրել շատ զրկանքներ, միայն թե վերադառնային հայրենիք և մասնակցեին նրա վերաշինության վեհ գործին: Այդ կապակցությամբ բուլղարահայ 30 մայրեր գրում են. «...Մեզի՞ մայրերու պետք չեն տաքուկ սենյակներ, տաքուկ անկողիններ, հայ մայրը, բռնակալության երեսն տառապող հայ կինը փոսցած է քարը բարձ և խոտը անկողին ընել ի սեր զավակներուն... Ինչո՞ւ մենք՝ մայրերս ալ, մեր կյանքի վերջամասին մեր ուժերը չնվիրենք հայրենիքի վերաշինման գործին»⁵:

¹ ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 2, թ. 244—249:

² «Սովետական Հայաստան», 1947, № 7, էջ 78:

³ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, Ե., 1970, էջ 215:

⁴ «ՀԿԿ պատմության ուրվագծեր», Եր., 1967, էջ 558:

⁵ Նույն տեղում, էջ 565:

⁶ ՀՍՍՀ ՀՄԵ, ԳԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 15, թ. 44:

Այդպիսի նամակներ ստացվում էին աշխարհի բոլոր հայաշատ երկրներից: Դա պանդուխտի հայրենակարոտ ձայնն էր, որը չէր կարող անպատասխան մնալ:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և ՀՍՄԸ ժողովրդասովետը ընդառաջ գնացին սփյուռքահայերի՝ Սովետական Հայաստան գալու բուռն ցանկությունը, միջնորդեցին ՍՍՀՄ ժողովրդասովետին՝ նոր հայրենադարձություն կազմակերպելու համար:

ՍՍՀՄ ժողովրդասովետը 1945 թ. նոյեմբերի 21-ին հատուկ որոշում ընդունեց «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին», որի վերաբերյալ 1945 թ. դեկտեմբերի 2-ին ՏԱՍՍ-ը հաղորդեց հետևյալը. «Նկատի ունենալով արտասահմանում ապրող հայերի դիմումը հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու համար նրանց թույլտվություն տալու մասին, ինչպես նաև Հայկական ՍՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը, ՍՍՀՄ ժողովրդական կոմիսարների սովետը հատուկ որոշում է ընդունել արտասահմանի հայերի հայրենիք վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին:

Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետին թույլ է տրվել կազմակերպել արտասահմանյան երկրներում ապրող այն հայերի վերադարձը, որոնք ցանկություն ունեն, ինչպես նաև հանձնարարվել է հայրենիք վերադարձող հայերի համար անհատական քնակարանային շինարարությունն ապահովել պետական վարկով՝ բնակելի տան արժեքի 50 տոկոսի շափով: Արտասահմանից ՍՍՀՄ վերադարձող հայերն ազատվում են նրանց պատկանող և նոր բնակավայրերը փոխադրվող գույքի համար մաքսավճար տալուց»:

ՍՍՀՄ ժողովրդասովետի 1945 թ. նոյեմբերի 21-ի հայրենադարձության մասին որոշումը համայն հայության շրջաններում առաջ բերեց բուռն ոգևորություն և խանդավառություն: Այդ լուրն այն բաղձալի տունդարձի կանչն էր, որին այդքան երկար սպասել էին նրանք: Հայությունը սուկ հայրենիք վերադառնալու և այնտեղ ապրելու նպատակով չէր նախապատրաստվում կազմակերպել հայրենադարձություն, այլ նաև ամբողջությամբ նվիրվելու Հայաստանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ծաղկմանն ու բարգավաճմանը: «Գնա՛ հայ պանդուխտ,— գրում էին ամերիկահայերը,— գնա՛, քար մըն ալ դուն դիր, բա՛ մըն ալ դուն շարժե, քրտինքի կաթիլ մըն ալ դուն թափե մեր վերածնված հայրենիքին համար, անոր լուսապայծառ ապագային և քո սերունդի հավերժացման համար»:

Համանման խանդավառություն էր համակել նաև Սովետական Հայաստանի հայությունը, որը երախտագիտական շերմազին ուղեծրաներ հղեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Միևիստրների խորհրդի հասցեով, արձագանքեց այդ պատմական որոշմանը՝ հրավերի նամակներ ու կանչեր ուղարկելով սփյուռքի իր քույրերին ու եղբայրներին: Այդ օրերին մեծ հայագետ Հրաչյա Աճառյանը գրում էր. «Այն օրից, երբ տաճկական յաթաղանից հազիվ ազատված, ձեր սիրտն արյունով և ձեր աչքերն արցունքով լցված, հայրենի տան ծխացող կրակներից փախաք ապաստան որոնելու օտար աստղերի տակ, սպասում էինք ձեզ ...Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսերով, մեր հոգիները հույսերով և մեր ձեռքը ծաղկի պսակներով լցված սպասում ենք ձեզ»:

Հայրենադարձի պատմական որոշումը երախտագիտության խորը զգացումով ողողնեց Հայոց եկեղեցին: Եկեղեցին սրտառուչ կոչ էր հղում համայն սփյուռքին. «Գարձե՛ք, որդիք իմ, դարձե՛ք տունը ձեր հայրական. ջարդեցե՛ք ընդմիջտ օտար ժայռերի վրա գաղթացուպը ձեր դարավոր ու վերադարձե՛ք շենշող հայրենիքը մեր»⁷:

ՍՍՀՄ ժողովրդասովետի պատմական որոշումը կենսագործելու նպատակով ՀԿԿ Կենտկոմը մորիլիզացրեց հանրապետության բոլոր ուժերը՝ կուսակցական-սովետական մարմիններին, կոմերիտական-հասարակական կազմակերպություններին: Այդ գործին լծվեցին նաև սփյուռքի առաջադիմական կուսակցությունները, մարզական ու մշակութային կազմակերպությունները, Հայ Բարեգործական Հնդհանուր Միությունը, հայ եկեղեցին: Միայն դաշնակցություն կուսակցություններն էր համառոտին պայթարում հայրենադարձության դեմ, քանի որ զանգվածային հայրենադարձության սահմանափակում էին այդ կուսակցության ազդեցության շրջանակները և ասպարեզը: Կորցնելով ոտքի տակի հողը՝ այդ կուսակցությունը նեքուստ ապրում էր իր անհետանալու և պատմության թատերաբեմը լքելու տագնապն ու մտավախությունը: Դա բացահայտ կամ քողարկված ձևով դրսևորվում էր այդ տարիներին նրա վարած քաղաքականության և գործունեության մեջ: Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ արտա-

⁷ «Սովետական Հայաստան», 1945, № 259, ՀՍՄԸ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 6, թ. 2:

⁸ ՀՍՄԸ ՀՀՍԾ, ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 9, թ. 76:

⁹ «Սովետական Հայաստան» ամսագիր, Ծր., 1945, № 6, էջ 38:

¹⁰ «Էջմիածին», 1946, հունվար, էջ 1:

սահմանյան հայերի հայրենադարձության կազմակերպումը վերածվեց համաժողովրդական, համահայկական միջոցառման:

Հայրենադարձության նախապատրաստական միջոցառումները քննարկվեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության 1946 թ. փետրվարյան պլենումում: Պլենումում հրապարակվեց արտասահմանյան երկրներում ապրող հայերի թիվը ըստ երկրների: Պարզվեց, որ մոտավոր տվյալներով, սփյուռքահայերի թիվը կազմում էր մեկ միլիոն: Ընդ որում, արդեն 1946 թ. սկզբին հայրենիք վերադառնալ էին ցանկացել 130 հազ. հայեր¹¹: Ինչ խոսք, գնալով ցանկություն հայտնողների թիվը բազմապատկվում էր, բայց Սովետական Հայաստանը ի վիճակի չէր բոլորին ընդունել պատերազմի առաջացրած տնտեսական ծանր պայմանների պատճառով: Զգացվում էր հացի, հագուստի, սննդամթերքների, անհրաժեշտ սպառման ապրանքների և, վերջապես, բնակարանների խիստ պակաս: Այդ ծանր պայմաններում հնարավոր չէր բոլոր վերադառնալ ցանկացողներին Հայրենիք տեղափոխել: Ուստի որոշվեց 1946 թ. ընդունել միայն 28800 արտասահմանյան հայերի¹²: Ամեն ինչ առաջին հերթին որոշելու էր բնակարանային շինարարության համապատասխան ծավալը և հաջող իրականացումը:

Պլենումը հանձնարարեց ՀՍՍՀ ժողկոմսովետին՝ որոշել տեղավորման հնարավորությունները ըստ շրջանների և արդյունաբերության և գյուղատնտեսության առանձին բնագավառների: Պարտավորեցվում էր համապատասխան ժողկոմատներին՝ առանց հապաղման սկսել առանձնացված բնակարանների վերանորոգման և նոր բնակարանների շինարարության աշխատանքները այն հաշվով, որ 1946 թ. ամռանը նոր շինարարության ֆոնդերի մի մասը շահագործման հանձնվի¹³:

Նոր ավանների կառուցման և հայրենադարձների կարթավոր տնտեսություններին նյութական օժանդակություն ցույց տալու համար պլենումը նպատակահարմար գտավ կազմակերպել դրամական միջոցների կամավոր հավաքում՝ ընդգրկելով նաև սփյուռքահայ զանգվածներին: Նույն սկզբունքով, կոլտնտեսականներն իրենց տնտեսությունից այդ նպատակի համար կարող էին առանձնացնել ընտանի թռչուններ, կենդանիներ և գյուղատնտեսական մթերքներ:

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV պլենումը հուլիս էր հայտնում, որ կուսակցական, սովետական մարմինները, ինչպես նաև կոլեկտիվ տնտեսությունները բոլոր ջանքերը կենդրոնեն ՍՍՀՄ ժողկոմսովետի պատմական որոշումը բարձր քաղաքական և կազմակերպչական մակարդակով կենսագործելու համար¹⁴:

Հայրենադարձության նախապատրաստական աշխատանքները հաջող կազմակերպելու նպատակով, դեռևս 1945 թ. դեկտեմբերի 8-ին ստեղծվեց «ՀՍՍՀ ժողկոմսովետին կից արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե», որի նախագահ հաստատվեց Բ. Աստվածատրյանը, տեղակալներ՝ Մ. Սարյանը, Հ. Մարջանյանը, անդամներ՝ Ս. Կարապետյանը և Ա. Մելիք-Աղամյանը¹⁵: Հայրենիք վերադարձածներին տեղավորելու և նրանց հատկացվելիք բնակարանային շինարարությունը ղեկավարելու համար 1946 թ. փետրվարի 15-ին և ապրիլի 27-ին ՀՍՍՀ ժողկոմսովետին կից ստեղծվեց «Վերաբնակեցման վարչություն»¹⁶, որն ուներ նաև շինարարական գրասենյակ¹⁷:

Արտասահմանյան հայերի ընդունումը և տեղավորումը լավ կազմակերպելու նպատակով ընդունման կետեր ստեղծվեցին Բաթումում, Զուլֆայում և Բուրվում, իսկ Հայաստանում՝ Լենինականում, Կիրովականում, Երևանում և Արտաշատում: Ցուրաքանչյուր կետում սկսվեց այդ նպատակին հատկացված շենքերի վերանորոգումը և նոր շենքերի կառուցումը¹⁸:

«Ներգաղթ կոմիտեի» ու «Վերաբնակեցման վարչության» միջև 1946 թ. կատարվեց աշխատանքի հետևյալ բաժանումը. ներգաղթ կոմիտեն պետք է ղեկավարեր արտասահմանյան երկրներում տարվող ողջ աշխատանքները, կազմակերպեր Բաթումում և Զուլֆայում հայրենադարձների ընդունումը և տեղավորումը՝ մինչև Հայաստանի համապատասխան կետերը հասցնելը: Իսկ Վերաբնակեցման վարչությունը՝ ղեկավարելու էր Հայաստանի ընդունման կետերում հայրեն-

¹¹ ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 113—114:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ «Սովետական Հայաստան», 1946, № 304:

¹⁶ ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 14, թ. 50:

¹⁷ Նույն տեղում, գ. 16, թ. 69:

¹⁸ Նույն տեղում, գ. 17, թ. 135—136, ՀՍՍՀ ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 12, թ. 16:

նադարձների բաշխումը, նրանց աշխատանքի տեղավորումը և նոր ավանների շինարարության գործը¹⁹:

Արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձությունը կազմակերպված անցկացնելու համար «Ներգաղթ կոմիտեն» եռանդուն աշխատանքներ տարավ հայաշատ երկրներում: Նամակներ ուղարկեց սփյուռքի բոլոր ազգային խորհուրդներին, բարեգործական միություն մասնաճյուղերին, հասարակական-քաղաքական, մշակութային և այլ առաջադիմական կազմակերպություններին՝ կոչ անելով տեղերում ստեղծել ներգաղթ կոմիտեներ և ենթակոմիտեներ:

Սփյուռքի առաջադիմական կազմակերպությունները հիմն մինչ այդ, Հայրենական պատերազմի ժամանակ, զբաղված էին Սովետական Հայաստանի հետ կապի հաստատման գործով և կազմակերպում էին սովետական րանակին ցույց տրվող նյութական օժանդակություն, պատրաստակամություն հայտնեցին լծվել հայահավաքման գործին: Նամակներում ասվում էր. «Կոմիտեն համոզված է, որ գաղութահայության մեջ գործող առաջադիմական կազմակերպությունները, որոնք մեր Սովետական Հայաստանին նվիրվածության, ինչպես և կազմակերպչական ընդունակության ու փորձի բազմաթիվ օրինակներ են տվել Ֆաշիզմի դեմ մղվող պայքարի օրերին, այսօր էլ ավելի մեծ եռանդով և նվիրվածությամբ կլծվեն ներգաղթի նախապատրաստման թեև ոչ դյուրին, սակայն պատվավոր և շնորհակալ հայրենասիրական գործին»²⁰:

Կարճ ժամանակում արտասահմանյան այն երկրներում, ուր գոյություն ունեին հայկական գաղթօջախներ, ստեղծվեցին կոմիտեներ, իսկ առանձին քաղաքներում ու շրջաններում՝ ենթակոմիտեներ, որոնք իրենց հերթին դիմեցին սփյուռքահայ աշխատավորներին, բացատրելով ցուցակագրման ու հայրենադարձության հետ կապված մասնամասնություններն ու նրբությունները՝ հաշվի առնելով տվյալ երկրի առանձնահատկությունները:

Արտասահմանում ստեղծված հայրենադարձությանը նպաստող օժանդակ կոմիտեները պետք է կազմակերպեին դիմումների ընդունումը, ցուցակագրումը, օգնեին հայրենադարձների գույքի տեղափոխությանը և անշարժ գույքի իրացմանը, պաշտպանեին նրանց ընտանեկան, ժառանգական և գույքային իրավունքները, որոշեին վերադառալու հերթը²¹: Այդ կոմիտեները և ենթակոմիտեները, որոնք ստեղծվեցին 1946 թ. փետրվարից մինչև ամառ, գտնվում էին ՀՍՄԷ միեմիստների խորհրդին կից «Ներգաղթ կոմիտեի» հետ մշտական կապի մեջ, ստանում էին հրահանգներ և բացատրություններ: Սակայն, շնայած դրան, շատ հարցեր տեղական կոմիտեների համար նորից մնում էին անհասկանալի, հատկապես տվյալ երկրի առանձնահատկություններից բխող հարցերը: Այսպես, եգիպտահայերը հայտնում էին, որ Սեդպտոսում գործող օրենքի համաձայն ստեղծվեցի դաշինքին (Անգլիային—Ն. Ս.) պատկանող երկրներից դրամի գույք հանելը խստիվ արգելվում է, խնդրում էին սովետական կառավարության միջամտությունը²²: Լիբանանում գրտնրվող ֆրանսիական րանակում ծառայող մոտ 1000 հայ զինվորներ հետաքրքրվում էին՝ իրենց ծառայության պայմանագրում նշված պայմանները ներգաղթից հետո կպահպանվե՞ն, թե ոչ²³: Իրանահայերից շատերը ցանկանում էին գալ ամբողջ գյուղերով, ստեղծելով անասնապահական ֆերմաներ և տնայնագործական արտեղներ, խնդրում էին իմանալ պայմանները²⁴: Նման առանձնահատուկ հարցերից բացի, հայրենադարձվող հայերին հետաքրքրում էին ընդհանուր կարգի հարցեր, ասենք՝ մեկնման ժամկետը, կենսաթոշակի հարցը, գույքի ու կալվածքների լուծարքի պայմանները, տեղափոխման վարձը, կուսակցականությունը, սեփականության և այլ բնույթի հարցեր, որոնք ստանում էին իրենց պատասխանը Երևանում: «Ներգաղթ կոմիտեն» քննարկում էր սփյուռքահայերի պաշտոնագրերը և անհատական նամակները ու տալիս նրանց պատասխանները, իսկ առանձին դեպքերում՝ նրանց խորհուրդ էր տրվում իրենց հարցերի սպառիչ պատասխանը ստանալ տվյալ երկրի սովետական դեսպանատանը:

Հայրենադարձությունը դյուրացնելու, այն քաղաքական բարձր մակարդակով անցկացնելու նպատակով ՍՄԷԾ ժողկոմսովետը թույլատրեց ՀՍՄԷ ժողկոմսովետին՝ արտասահմանյան երկրների գործուղել իր ներկայացուցիչներին (երկուական հոգի յուրաքանչյուր երկիր), իսկ արտասահմանյան երկրներից՝ նշանակել քարավանների ուղեկցողներ²⁵:

Թեև արտասահմանում հայերի հայրենադարձի գործնական աշխատանքները կազմակեր-

¹⁹ ՀՍՄԷ ՀՄԵ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 15, թ. 40—41:

²⁰ Նույն տեղում, ց. 2, գ. 6, թ. 8—10:

²¹ Նույն տեղում, ց. 1, գ. 15, թ. 54—56:

²² Նույն տեղում, ց. 8, գ. 3, թ. 9:

²³ Նույն տեղում, ց. 3, գ. 4, թ. 17:

²⁴ Նույն տեղում, գ. 17, թ. 3:

²⁵ Նույն տեղում, գ. 20, թ. 18—25:

պում էին տեղական կոմիտեները, այնուհանդերձ սովետական ղեսպանատան համապատասխան ներկայացուցիչները օգնում էին նրանց լուծելու առավել դժվար հարցերը:

ՍՍՀՄ ժողովուրդները, այդ բոլորից բացի, ՍՍՀՄ արտաքին գործերի կոմիսարիատին կից ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը պետք է ղեկավարեր արտասահմանյան երկրներում սովետական ղեսպանատան աշխատողների գործունեությունը հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ²⁶:

1943 թվականից սկսած Սփյուռքում տեղի ունեցավ սոցիալական ու քաղաքական ուժերի վերախմբավորում՝ միավորվեցին ղեմնկրատական առաջադիմական ուժերը՝ ռամկավարները, հընչակյանները և շեղոր խավերը: Նրանք որոշեցին գործել միասնաբար՝ ամենուրեք ստեղծելով Հայաստանի բարեկամ կազմակերպությունների միասնական ճակատ: Շուտով համարյա բոլոր գաղթաբյուրեղներում ստեղծվեցին ազգային խորհուրդներ: 1944 թ. մարտի 19-ին ստեղծվեց ԱՄՆ-ի Հայ ազգային խորհուրդը, որից հետո 1945 թ. ազգային խորհուրդներ ստեղծվեցին հայաշատ մյուս երկրներում: «Արձագանքելով ամերիկահայերի միասնության շարժմանը, սփյուռքահայ տարրեր գաղութներում ստեղծվեցին Հայ ազգային խորհուրդներ, որոնք ՀՍՍՀ կառավարությունը համարում էին արտասահմանի հայության ազգային բոլոր ցանկությունների լավագույն «Քարգմանը և իրագործողը», պահանջում էին Քուրթբաշի կողմից բռնագրավված հայկական հողերը կցել Սովետական Հայաստանին և կազմակերպել սփյուռքահայ աշխատավորական զանգվածների հայրենադարձություն»²⁷:

Ազգային խորհուրդներն իրենց գործը և խնդիրները ավարտելուց հետո շատ երկրներում լուծարքի ենթարկվեցին ներգաղթ կոմիտեների մեջ, իսկ մի շարք երկրներում՝ ԱՄՆ, Ֆրանսիա և այլն, գործեցին համատեղ: Ներգաղթը դարձավ սփյուռքահայության առաջնահերթ խնդիրը: Այսպես, Ֆրանսիայի ազգային ընդհանուր միությունը, դիմելով գաղութի հայությանը, ընդգծում է, որ հայ ժողովրդի պատմության մեջ ներգաղթը եզակի երևույթ է... Ամեն րան ներգաղթի համար, ներգաղթի ամեն րանն վեր և ամեն րանն առաջ»²⁸: Բայց այդպես չէին մտածում դաշնակները: Բնութագրելով ներգաղթը որպես հայ ժողովրդի նոր ողբերգություն, նրանք ամեն կերպ խոչընդոտում էին ներգաղթի նախապատրաստական աշխատանքները: Գաշնակցական կուսակցության օրգանները չէին կարող բացահայտ դեմ դուրս գալ հայրենադարձին, քանի որ ողջ սփյուռքահայությունը առանց դասակարգային տարբերության, նույնիսկ շարքային դաշնակցականները ոտքի էին կանգնել՝ Սովետական Հայաստան մեկնելու: Ուստի, ստիպված, քողարկելով իրենց իսկական կարծիքները, նրանք ներգաղթի նման ձևը համարեցին սխալ. «Չարամտությունները կանխելու համար ըսենք, որ մենք հակառակ շենք ներգաղթին,— գրում էին նրանք,— պարտավոր ենք ժողովրդին հայտնել, որ մենք լուրջ շենք նկատեր ներգաղթի կազմակերպման այդ ձևը»²⁹:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ն հատուկ կոնդակով արտասահմանի բոլոր թեմական առաջնորդներին հրահանգեց ամեն տեսակի աջակցություն ցույց տալ հայկական գաղութներում կազմակերպվող ներգաղթի կոմիտեներին, կազմակերպել նյութական հանգանակություն³⁰: Ներգաղթի ֆոնդի օգտին հանգանակության կոչ արեցին հասարակական-քաղաքական կազմակերպությունները³¹:

Սովետական Հայաստանի ողջ աշխատավորությունը իր հերթին իր սուղ միջոցներից բաժին հանեց ներգաղթը կազմակերպելու հայրենամուտ գործին:

Հանգանակության սկիզբը դրեցին Արտաշատի շրջանի աշխատավորները: Նրանք կոչով դիմեցին հանրապետության բոլոր աշխատավորներին, որտեղ ասվում էր. «Մենք՝ Արտաշատի շրջանի աշխատավորներս, որոշել ենք ստեղծել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ... Մենք՝ արտաշատցիներս կոչ ենք անում մեր հանրապետության բոլոր աշխատավորներին՝ բավորներին, ծառայողներին, կոլտնտեսականներին, ինտելիգենցիային հետևել մեր օրինակին»³²:

²⁶ Նույն տեղում, գ. 12, թ. 56:

²⁷ Հ. Խ. Քոփուլյան, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, 1978, էջ 269, տե՛ս նաև պաղեստինահայ Ազգային խորհրդի հուշագիրը, ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 52, թ. 63:

²⁸ ՀՍՍՀ ՀՄԿ Ա, ֆ. 362, ց. 2, գ. 6, թ. 37:

²⁹ «Ազդակ», 1 փետրվարի, 1946, թիվ 49:

³⁰ «Էջմիածին», 1946, օգոստոս-սեպտեմբեր, էջ 3—4:

³¹ ՄԼԻ հայկական ֆիլ. կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 14, թ. 216:

³² «Սովետական Հայաստան», օրաթերթ, 1946, № 81:

Հարապետութեան քաղաքներում, շրջաններում, ձեռնարկութիւններում և գլուղերում տեղի ունեցան բազմամարդ միտինգներ, ժողովներ, որոնք քննութեան առան արտաշատցիների դիմումը: Երևանի պետական համալսարանի ժողովի մասնակիցները միաձայն որոշեցին իրենց հինգ օրվա աշխատավարձը տրամադրել ներգաղթող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու համար³³:

Ներգաղթի ֆոնդին նվիրված հանգանակութիւնը լայն շահեր ընդունեց արտասահմանյան այն երկրներում, որտեղ հայերի տնտեսական վիճակը համեմատաբար լավ էր: Հանգանակութեան հիմնական ծանրութիւնը իրենց վրա վերցրին ամերիկահայերը: «Ամերիկայի բարեգործական միութիւնը միայն 1946 թ. նոյեմբերին ներգաղթ կոմիտեին ուղարկեց 300 հազար դոլար»³⁴:

1947 թ. Նյու Յորքում գումարված համաշխարհային հայկական կոնգրեսը որոշեց մինչև 1950 թ. հավաքել 5 միլիոն դոլար: Մեկ միլիոնը պետք է հավաքվեր 1947 թվականին³⁵:

Հայրենադարձութեան նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը և գործնական իրացումը սերտ կերպով առնչվում էր այդ կապակցութեամբ ծավալվող բնակարանային շինարարութեան և եկվորներին աշխատանքով ապահովելու խնդիրների բարեհաջող կազմակերպման հետ:

Հայրենադարձներին տեղավորելու և կուլտուր-կենցաղային բավարար պայմաններ ստեղծելու աշխատանքներն ընթանում էին հիմնականում նոր բնակարանների կառուցման, եղած բնակարանային ֆոնդերից հատկացման և բնակեցման համար սենյակների վերանորոգման ու հարմարեցման ուղղութեամբ: Լայն ծավալ ստացավ նաև անհատական բնակարանային շինարարութեան կազմակերպումը, որը վարկավորում էր պետրանկը:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և կառավարութիւնը պարբերաբար անդրադառնում էին հայրենադարձութեան կազմակերպման նախապատրաստական հարցերին և կայացնում գործնական որոշումներ:

Բնակարանների նախապատրաստման և հաշվառման կարևոր գործը կազմակերպելու համար ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնց մեջ մտան նաև հանրապետութեան ղեկավար աշխատողները: Հայաստանի հյուսիսային մասի գլուղական շրջաններում հայրենադարձների ընդունման նախապատրաստական միջոցառումների կազմակերպման ղեկավարութիւնը հանձնարարվեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահութեան նախագահ Մ. Պապյանին, հարավային մասի գլուղական շրջաններում՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Սարգսյանին, սովխոզներինը՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ. Հարութիւնյանին, արդյունաբերական շինարարութեանը՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ Ի. Սոշինսկուն³⁶: Որոշվեց Հրազդանի հարավային ջրանցքի ոռոգման տարածքում երկու, իսկ Վեդու շրջանում մեկ՝ մոտ 250 տնտեսութեամբ նոր կոտնտեսային տիպի ավաններ կառուցել, որտեղ յուրաքանչյուր տնտեսութեան հատկացվելու էր 0,15 հեկտար տարածութիւն (քարքարոտ տեղերում՝ 0,20 հեկտար)³⁷:

Սովետական Հայաստանում նախատեսված ողջ շինարարական աշխատանքները, ինչպես նաև սենյակների առանձնացումն ու հարմարեցումը իրականացնելու էին միութենական, միութենական-հանրապետական, հանրապետական ենթակայութեան մինիստրութիւններն ու գերատեսչութիւնները, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից վերարձեցման վարչութիւնը, արհեստագործական կոոպերացիայի վարչութիւնը, քաղաքային և շրջանային սովետների գործկոմները: Շինարարական աշխատանքների կազմակերպման ֆինանսավորումը իրականացնում էին կենտրոնական կոմունալ բանկը և գլուղական տնտեսութեան բանկը:

Բնակարանների կառուցման և պատրաստի ֆոնդից բնակարան հատկացնելու յուրաքանչյուր տարվա պլանը հաստատում էր ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, որը և 1946 թ. հունիսի 21-ին որոշում ընդունեց ՀՍՍՀ-ում արտասահմանյան հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու միջոցառումների մասին: Այդ որոշումն էլ հենց դարձավ 1946 թ. բնակարանային շինարարութեան պլանը: Այն կենսագործելու նպատակով 1946 թ. հուլիսի 9-ին ՀԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը միացյալ որոշում ընդունեցին, ըստ որի 1946 թ. կառուցվելու էր 135 հազ. մ² բնակելի տարածութիւն, որից 32,5 հազ. մ² կառուցվելու էր մինիստ-

³³ Տե՛ս նույն տեղը, № 82:

³⁴ ՀՍՍՀ ՀՀՄՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 9, թ. 121:

³⁵ «Համառոտ տեղեկութիւն համաշխարհային հայկական կոնգրեսի», 1947, Նյու Յորք, 1965, էջ 20:

³⁶ ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 31, թ. 39—40:

³⁷ Նույն տեղում, գ. 16, թ. 115:

րությունների, գերատեսչությունների ու կազմակերպությունների, 8100 մ² տեղական սովետների միջոցով: Բացի այդ, գործկոմները պարտավորվում էին կոլտնտեսություններում կառուցել 40 հազ. մ² բնակարարաօթություն, քաղաքներում և քաղաքատիպ ավաններում՝ 6,4 մ²: Գոյություն ունեցող բնակֆոնդից պետք է վերանորոգվեր 3 հազ. մ² բնակարարաօթություն: Կենտրոնական կոմունալ բանկը և գյուղական տնտեսության բանկը պարտավորվում էին գյուղերում մասնավոր տներ կառուցելու համար հայրենիք վերադարձող հայերին տրամադրել 25 հազ. ուրբի, իսկ քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում մինչև 30 հազ. ուրբի վարկ՝ 15 տարում մարելու պայմանով: Գյուղերում բնակեցված հայրենադարձները երկու տարի ժամանակով ազատվում էին գյուղատնտեսական հարկից: Ամուրի, միայնակ ու սակավընտանիք քաղաքացիները ազատվում էին համապատասխան հարկերից, իսկ վերաբնակիչ հայեր ընդունած կոլտնտեսությունները տնտեսությունների թվի չափով ազատվում էին եկամտահարկի վճարումից³⁶:

1947 թ. շինարարական աշխատանքների պլանը ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը հաստատում է 1947 թ. հունվարի 29-ին:

Թեև 1946 թ. հսկայական քանակությամբ բնակարանային շինարարական աշխատանքներ էին փոխանցվել 1947 թ., այնուհանդերձ նոր բնակարանների կառուցման պլանը 1947 թ. զգալի չափով ավելացել էր, քանի որ 1947 թ. նախատեսված էր ընդունել 63 հազար հայրենադարձներ³⁹, Հայրենադարձներին տեղավորելու համար 1947 թ. նախատեսվում էր կառուցել 147,350 մ² բնակարանային տարածություն:

Վերաբնակեցման վարչությունը 1947 թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում պետք է ավարտեր 1946 թ. սկսած երեք ավանների կառուցումը և միաժամանակ սկսեր շորս նոր ավանների կառուցումը:

Օգտագործելով 1946 թ. փորձը, 1947 թ. առանձնահատուկ տեղ էր հատկացվում բնակարանների հարմարեցման աշխատանքներին: Նախատեսվում էր գյուղական վայրերում առանձնացնել 7 հազար, իսկ քաղաքային վայրերում 9 հազար սենյակ⁴⁰:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հայրենադարձներին ընդունելու և տեղավորելու աշխատանքները կազմակերպելուն ու զեկավարելուն զուգահեռ շարունակում էին նոր խմբեր ընդունելու նախապատրաստական աշխատանքները: ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1947 թ. դեկտեմբերի 10-ին հաստատեց 1948 թ. հայրենադարձների համար բնակարանային շինարարության պլանը: Հստ այդ պլանի 1948 թ. նախատեսվում էր կառուցել 15654 տուն, որից միութենական ենթակայության հիմնարկությունների միջոցով՝ 2611 տուն (42,700 մ²), միութենական հանրապետական ենթակայության ձեռնարկությունների միջոցով՝ 1397 տուն (14,300 մ²), հանրապետական ենթակայության ձեռնարկությունների միջոցով՝ 1337 տուն (27,000 մ²), իսկ բանկի փոխառությամբ 10309 տուն: ՀՍՀՄ Մինիստրների խորհուրդը պարտավորվեց ապահովել հայրենադարձությունը մինչև 1948 թ. հոկտեմբերի 1-ը և ընդունել 10 հազար սփյուռքահայերի⁴¹:

1948 թ. համար ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը հանձնարարում է ՍՍՀՄ Պետպլանին և գյուղմինիստրությանը՝ ոռոգման և մեխորատիվ աշխատանքների պլանի մեջ մտցնել Շամիրամի ջրանցքի կառուցումը, Արարատյան դաշտի ճահիճների շորացումն ու նոր հողերի ոռոգումը: ՀՍՀՄ Մինիստրների խորհրդին հանձնարարվում է ընդհանուր հողային տարածքից հայրենադարձ կոլտնտեսականների տնամերձների համար առանձնացնել 1200 հա հող⁴²:

ՀԿ(բ)Կ XIV համագումարը 1948 թ. նոյեմբերին անդրադարձավ սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման աշխատանքներին և ընդունեց համապատասխան որոշում, որտեղ մասնավորապես ասվում էր. «...Ապահովել հայրենադարձ հայերի համար բնակելի տները ժամանակին շահագործման հանձնելը և նրանց ամեն կերպ օգնել անհատական բնակարանային շինարարությունը հաջողությամբ իրագործելու համար: Աշխատանքներ կատարել այն ավանների

³⁶ «Սովետական Հայաստան», 12 հուլիսի, 1946, № 162: ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 31, ք. 104—110, ՀՍՀՄ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 20, ք. 7:

³⁸ ՀՍՀՄ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 20, ք. 18—34:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ ՀՍՀՄ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 20, ք. 9—10:

⁴² Նույն տեղում, ք. 44, ՄԼԻ հայկական ֆիլ. կուսարխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 30, ք. 170:

բարեկարգման և կուլտուր-կենցաղային հիմնարկությունների շինարարության ասպարեզում, որտեղ թնակվում են հայրենադարձ հայեր»⁴³:

Չնայած պատերազմի հեթեհանքով առաջացած դժվարություններին, Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ամենօրյա հոգատարության ու ջանքերի, հանրապետության և Սփյուռքի ողջ աշխատավորության ակտիվ մասնակցության շնորհիվ հնարավոր դարձավ 1946—1948 թթ. Սովետական Հայաստան ներգաղթած մոտ 89,415⁴⁴ սփյուռքահայերի ընդունման և տեղավորման աշխատանքները պսակել հաջողությամբ:

Н. А. САРКИСЯН—Деятельность КП Армении по подготовке и организации репатриации зарубежных армян. — После окончания Великой Отечественной войны, идя навстречу желанию зарубежных армян и учитывая ходатайство Коммунистической партии Армении и правительства Армянской ССР, 21 ноября 1945 г. Совет Народных Комиссаров принял постановление о репатриации зарубежных армян. В связи с этим КП Армении и Совет Министров Арм. ССР приняли ряд решений для подготовки репатриации в 1946—1948 гг. При Совете Министров Арм. ССР были созданы Комитет по приему и устройству зарубежных армян и Переселенческое управление. В подготовке репатриации зарубежных армян 1946—1948 гг. приняли активное участие трудящиеся всей Советской Армении и прогрессивные организации спюрка, оказывая материальную и моральную помощь этому важному мероприятию. Несмотря на то что Советская Армения в эти годы находилась в тяжелых экономических условиях, она смогла организовать подготовительные работы по репатриации на должном уровне.

⁴³ «Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության 14-րդ համագումարի բանաձևը 24(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին», Եր., 1948, էջ 25:

⁴⁴ ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 37, գ. 353, թ. 17—23, 25: